ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ծառայությունների մատուցման մասին թիվ_978

ք.Երևան «26»01. 2018թ.

«ԿԱՖԷ» ՍՊԸ, հետագայում «կատարող», ի դեմս տնօրեն՝ Թորգոմ Չոբանյանի, որը գործում է ըստ կանոնադրության, մի կողմից և « Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվ. առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, հետագայում «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Ալեքսանդր Բազարչյանի, որը գործում է ըստ կանոնադրության, մյուս կողմից , կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝:

1. Պայմանագրի առարկան

1.1 Համաձայն սույն պայմանագրի Կատարողը պարտավոր է Պատվիրատուի համաձայնությամբ մատուցել հետևյալ ծառայությունները (քարտեզագրում, գեոդեզիա, հաշվառում, չափագրում, անշարժ գույքի վերաբերյալ խորհրդատվություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2 Կատարողը պարտավորվում է պայմանագրի 1.3 կետում նշված ժամանակահատվածում իրականացնել ք. Երևան, Կոմիտաս պող., 49/4 հասցեի չափագրման աշխատանքները:

1.3 Աշխատանքների կատարման ժամկետն է «26» 01.2018թ. մինչև «09»02.2018թ.:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

Կատարողը պարտավոր է՝

ա) ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

բ) Պատվիրատուի պահանջով 3 օրվա ընթացքում անհատույց վերացնել բոլոր թերությունները:

գ) անձամբ կատարել է ծառայությունները:

Պատվիրատուն պարտավոր է՝

դ) վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան:

ե) Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի ծառայությունների ընթացքը և որակը առանց միջամտելու նրա գործունեությանը:

Պատվիրատուի կողմից պայմանագրի կնքման պահին կատարված կանխավճարը՝ Պատվիրատուի կողմից պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջի դեպքում, վերադարձման ենթակա չէ, եթե Կատարողի կողմից կատարվել են պայմանագրով ստանձնված պարտավորությունները (աշխատանքները):

3.Պայմանագրի գինը և վճարման կարգը

Սույն պայմանագրի գինը կազմում է_240000,0 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ: Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է ծառայությունները հանձնելուց անմիջապես հետո, փոխանցումով՝ Կատարողի նշված բանկային հաշվեհամարին, կամ կանխիկ վճարմամբ:

4. Այլ պայմաններ

Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Կողմերի հասցեներն ու վավերապայմաններն:

Կատարող՝
«ԿԱՖԷ» ՍՊԸ
ՀՎՀՀ 00888456
Հասցե՝
ք. Երևան, Կոմիտաս 51, 2-րդ հարկ, N 2 շ.
Տնօրեն Թորգոմ Չոբանյան

Պատվիրատու՝
«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվ. առողջապահության ազգային ինստիտուտ»ՓԲԸ
ՀՎՀՀ 0011624
Հասցե՝ք. Երևան, Կոմիտաս պող., 49/4
Տնօրեն՝ Ալեքսանդր Բազարչյան